

«ՏՈՆՏՈՆ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՍՊԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՍՈՎ

31 դեկտեմբեր 2025թ.

ԵՐԵՎԱՆ 2026

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

27.02.2026
N 012601

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բյուրո թղթի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Վ. Գևորգյան



ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՏՈՒՏՈՒ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՍՊԸ
Մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՏՈՒՏՈՒ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապատասխան ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այլապիսի ներքին հսկողության համար:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հնկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան ղեկավարում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հնկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն ղեկավարի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հնկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հնկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Նախապես, աուդիտը կարող էն առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամուտք են կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազմեն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դաստոգություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Նախապես, պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք արդյոք առկա է ղեկավարի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորվել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Շնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր

Շ. Թաշչյան



27.02.2026թ.

ԵԱՀՈՒՅԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐԳԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

			(հազար դրամ)
	Մանրագրություն	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	5	508,615	515,465
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	5	(362,217)	(442,650)
Զուտ տոկոսային եկամուտ		146,398	72,815
Զուտ առևտրային եկամուտ	6	400,930	126,222
Այլ եկամուտ		20	15
Ընդհանուր վարչական ծախսեր	7	(70,900)	(57,901)
Այլ ծախսեր	8	(47,637)	(14,228)
Շահույթ/(վնաս)՝ մինչև հարկվելը		428,811	126,923
Շահութահարկի գծով ծախս		(2,190)	-
Ընդամենը տարվա շահույթ/(վնաս)		426,621	126,923
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների վերագնահատում		-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		426,621	126,923

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

		2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	116,446	68,950
Պահանջներ բանկերի նկատմամբ	10	886,461	555,968
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		28,680	254
Տրված փոխառություններ	11	43,458	44,552
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումներ	12	4,438,698	4,851,286
Հիմնական միջոցներ	13	7,998	9,583
Այլ ակտիվներ		789	713
Ընդամենը՝ ակտիվներ		5,522,530	5,531,326
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	14	4,540,494	4,984,695
Ստացված փոխառություններ	15	62,936	52,742
Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		220	4,700
Այլ պարտավորություններ		5,721	2,651
Ընդամենը՝ պարտավորություններ		4,609,371	5,044,788
Մեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	16	412,000	412,000
Զբաղիված շահույթ		501,159	74,538
Ընդամենը՝ կապիտալ		913,159	486,538
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		5,522,530	5,531,326

Գ. Առաքելյան
Գործադիր տնօրեն

27.02.2026թ.



Ա. Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

(Handwritten signature)

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

	(Հազար դրամ)		
	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ	412,000	(52,385)	359,615
Շահույթ հարկումից հետո	-	126,923	126,923
Հաշվեկշիռը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	412,000	74,538	486,538
Շահույթ հարկումից հետո	-	426,621	426,621
Հաշվեկշիռը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	412,000	501,159	913,159

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ժամանակաշրջանի համար

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական միջոցների գուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	(438,657)	(503,555)
Ստացված տոկոսներ	-	-
Վճարված տոկոսներ	(363,136)	(440,234)
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնականություններից օգուտ (վնաս)	(3,151)	(2,572)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(53,014)	(40,823)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր	(19,356)	(19,926)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	-	-
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում), այդ թվում՝ շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող գումարների նվազում (ավելացում)	-	-
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը	(438,657)	(503,555)
Վճարված շահութահարկ	-	-
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	(438,657)	(503,555)
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)	921,347	437,250
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(228)	(8,657)
Պահանջներ բանկերի և կատմամբ (ավելացում)	(330,473)	(105,082)
Դրամական միջոցների գուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից	68,458	15,187
Ջուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	659,104	338,698
Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		
Ստացված փոխառությունների ավելացում (նվազում)	(501,288)	(37,703)
Ջուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	(501,288)	(37,703)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	328,337	102,867
Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ (նվազում)	47,496	(99,693)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	68,950	168,643
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	116,446	68,950

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեություն

«ՏՈՒՏՈՒ» Ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) հիմնադրվել է 1999 թ. ապրիլի 27-ին ՀՀ օրենսդրությանը համաձայն, որպես շահույթ ստանալու նպատակով հիմնադրված, առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է բաժնեմասերի Կանոնադրությամբ սահմանված չափերով: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հունիսի 27-ի թիվ 124 ՄՕՀ Ա որոշման, Ընկերության կանոնադրությունը (և որ խմբագրությամբ) 27.06.2008թ.-ին գրանցվել է ՀՀ Կենտրոնական բանկում՝ գրանցման վկայական թիվ 7:

Համաձայն Ընկերության կանոնադրության Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 412 միլիոն ՀՀ դրամ, որը բաժանված է 412 հազար բաժնեմասերի: Մեկ բաժնեմասի անվանական արժեքը կազմում է 1000 ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են ընկերության մասնակիցներին:

«ՏՈՒՏՈՒ» Ինվեստիցիոն Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը 31 դեկտեմբերի 2024թ. դրությամբ ունի 2 մասնակից:

«ՏՈՒՏՈՒ» ԻՆՎԵՍՏԻՑԻՈՆ ՍՊԸ-ի նշանակալից մասնակիցներն են՝

1. Վահագն Առաքելյանը – 70% մասնակցությամբ
2. Գոռ Առաքելյանը – 30% մասնակցությամբ

Ընկերության ֆիրմային անվանումն է «ՏՈՒՏՈՒ» Ինվեստիցիոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, կրճատ՝ «ՏՈՒՏՈՒ» ՍՊԸ:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Աղոնցի 10: Ընկերությունը ներկայացուցչություններ և մասնաճյուղեր չունի, և որևէ խմբի անդամ չի հանդիսանում:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «ՏՈՒՏՈՒ» Ինվեստիցիոն ՍՊԸ աշխատողների թվաքանակը կազմում է 6 մարդ:

Ընկերության գործառնությունների հիմանկան տեսակներն են.

1. ներդրումային գործունեություն
2. պահառության գործունեություն
3. արժեթղթերի շուկայում խորհրդատվական և ինվեստիցիոն բրոքերային գործունեություններ
4. արտարժույթի առք ու վաճառք
5. ֆինանսական խորհրդատվություն:

Ընկերությունը իրականացնում է՝ ներդրումներ ՀՀ պետական պարտատոմսերում, հաճախորդների արժեթղթերի պահառություն և արժեթղթերի նկատմամբ իրավունքների հաշվառման ու փոխանցման գործունեություն, արտարժույթի առք ու վաճառք, բրոքերային գործառնություններ արժեթղթերով:

Ընկերության 2024թ.-ի Ֆինանսական գործունեության տարեկան առաջնությունը իրականացրել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ առաջնության կանոնադրական խորհրդատվական ընկերությունը, որի դիմաց վճարումը կատարվել է համաձայն կողմերի միջև կնքված պայմանագրի:

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ("ՖՀՄՄ") պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև առյև Ֆինանսական հաշվետվություններին ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Սույն ֆինանսական հաշվետվություններին հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում: Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվություններին վրա:

Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները կազմելիս, բացառությամբ դրամական հոսքերի մասին տեղեկատվության, իրականացնում է հաշվապահական հաշվառման հաշվեգրման սկզբունքի հիման վրա, ըստ որի գործառնականները ճանաչվում են դրանց կատարման պահին և հաշվառման գրանցամատյաններում գրանցվում են ու ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում դրանց կատարման ժամանակաշրջանում:

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմված են հետևյալ սկզբունքներին համաձայն.

- ✓ Անընդհատություն. Ընկերությունը չի պատրաստվում դադարացնել կամ կրճատել իր գործունեությունը տեսանելի ապագայում:
- ✓ Էականություն. Ընկերության ֆինանսական հաշվետվություններում բացահայտված են բոլոր այն տեղեկատվությունները, որոնց չբացահայտումը կարող է ազդել օգտագործողների տնտեսական որոշումներ ընդունելու վրա:
- ✓ Հետևողականությունը. Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը չի փոփոխվում հաշվետու ժամանակաշրջանից մյուսը, եթե էական փոփոխություններ չեն տեղի ունեցել ընկերության գործառնականությունների բնույթում:
- ✓ Հաշվեգրում. տնտեսական գործառնականությունների արդյունքները գրանցվում են ճանաչման պահին՝ անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետներից և

արտացոլվում են այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են:

✓ Համադրելիություն. Հնկերության տարբեր ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները պետք է համադրելի լինեն:

Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը

Հնկերության կողմից գործարքների կատարման ընթացքում ստացված կամ ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը: Հնկերությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով (օրական կտրվածքով), անկախ եկամտի փաստաղթի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հատուցման իրական արժեքով, հաշվեկշռի ամսաթվի դրությամբ, գործարքի ավարտման աստիճանի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հնկերությունը ոչ տոկոսային ծախսերը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման սկզբունքով՝ հիմք ընդունելով համապատասխան պայմանագիրը կամ նախորդ ժամանակաշրջանի վճարումները, ընդ որում, ոչ տոկոսային ծախսերի գծով, հաշվեգրումները կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

Արտարժույթային գործառնությունների հաշվառումը

Հնկերությունը հաշվապահական հաշվառումը վարում և ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում է ՀՀ արժույթով: Արտարժույթով արտահայտված գործառնությունները Հնկերությունը գրանցում է հաշվետվական արժույթով, կիրառելով գործարքի օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից տվյալ արտարժույթի նկատմամբ սահմանված փոխարժեքը: Սկզբնական ճանաչումից հետո հողվածները վերագնահատվում են տվյալ օրվա փակման փոխարժեքով:

Հարկեր (ընթացիկ և հետաձգված)

Հնկերությունում շահութահարկի, ավելացված արժեքի հարկի, եկամտահարկի, գույքահարկի, հողի հարկի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների գծով հաշվառումը տարվում է ՀՀ հարկային օրենսդրությանը համապատասխան:

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ շահութահարկի գումարը հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համաձայն յուրաքանչյուր ամսվա համար հաշվեգրվում է շահութահարկի պարտավորությունը շահույթի նկատմամբ, հաշվետու տարվա վերջին այն ճշգրտվում է և հաշվանցվում շահութահարկի գծով կատարված կանխավճարների հետ:

Հետաձգված հարկերը առաջանում են ակտիվի կամ պարտավորության հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև եղած ժամանակավոր տարբերություններից: Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկային պարտավորությունների գծով, եթե առկա են այդպիսիք, մասնաճանաչվում են ամբողջությամբ: Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այն չափով, որքանով որ հավանական է տվյալ ակտիվների իրացումը: Շահութահարկի գծով հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են:

Ֆինանսական գործիքների ճանաչումը/գնահատումը

Հնկերության կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ շահույթ կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռք բերման պահին: Հնկերության ղեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա, ինչպես նաև առաջնորդվում է ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով, կարգերով, հրամաններով, մեթոդական ուղեցույցներով և հաշվապահական միջազգային ստանդարտներով:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ընկերության կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի (մուտքագրումը) և կամ արտահոսքի (ելքագրումը) ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատշաճ կերպով կազմված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

Շահույթի կամ վնասի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այն ֆինանսական ակտիվները, որոնք չեն համապատասխանում հետագայում ամորտիզացված արժեքով չափվելու կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվելու չափանիշներին, սկզբնական ճանաչումից հետո դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով չափվող:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախատեսված չէ որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող.

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հավաքագրելու և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով և ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները նախատեսում են որոշակի ամսաթվերին դրամական միջոցների հոսքերի առաջացում, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե կազմակերպության բիզնես մոդելով նախատեսվում է այն պահել պայմանագրային դրամական հոսքերը հավաքագրելու նպատակով, և պայմանագրային դրամական հոսքերը համարվում են բացառապես մայր գումար և չմարված մայր գումարի նկատմամբ հաշվառվող տոկոսներ: Տոկոս է համարվում ժամանակի և պարտքային ռիսկի դիմաց հատուցումը, և մասնավորապես, եթե վճարման ուշացումը չի առաջացնում պայմանագրով նախատեսված լրացուցիչ հատուցում, ապա դա չի համարվում բացառապես տոկոսի և մայր գումարի վճարում: Ընկերության կողմից որպես իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով հաշվառվող ֆինանսական ակտիվներ են դասակարգվում ՀՀ պետական պարտատոմսերը, կորպորատիվ պարտատոմսերը և բաժնային գործիքները, իսկ փոխառություններն ու երաշխավորությունները ամորտիզացված արժեքով չափվող:

Ռեպո համաձայնագրերով գործառնություններ

Ռեպո համաձայնագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրած փոխառությունների դիմաց ապահովություն: Ռեպո համաձայնագրերով տրված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ: Ռեպո համաձայնագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում: Ռեպո համաձայնագրերով ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ: Դրանց գծով վճարվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս:

- 1) վարկեր և փոխառություններ բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին, հաճախորդներին,
- 2) վարկերի և տրամադրված այլ փոխառությունների արժեգրկման գծով կորուստների որոշման և անհուսալի վարկերի և տրամադրված այլ փոխառությունների դուրսգրման հիմունքը,
- 3) Տոկոսների հաշվեգրման դադարեցումը,

Գործող պայմանագրերի շրջանակներում տոկոսների հաշվեգրումը դադարում է, երբ կա բավարար հիմք կարծելու, որ դրանք չեն հավաքագրվի:

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Հիմնական միջոցները որպես ակտիվ հաշվառվում են սկզբնական արժեքով(ինքնարժեքով) ՀՀ դրամով: Արտարժույթով ձեռք բերված հիմնական միջոցները գրանցվում են ձեռք բերման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքով և հետագայում՝ փոխարժեքի փոփոխման դեպքում չեն վերագնահատվում: Հիմնական միջոցի օգտակար ծառայության ընթացքում դրանց մաշվածության գումարը պարբերաբար բաշխվում է և ճանաչվում է որպես ծախս: Հնկերության հիմնական միջոցները որպես շենքեր, գրասենյակային սարքավորում կամ կապի ու հաղորդակցության միջոցներ, հաշվողական, համակարգչային, ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, այլ հիմնական միջոցներ հաշվառման նպատակով դասակարգելիս առաջնորդվում է՝ ելնելով դրանց օգտագործման նշանակությունից և նպատակներից:

Հնկերությունում կիրառվում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը:

Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

Հիմնական միջոցներ	Օգտակար ծառայության ժամկետ (տարի)
Շենքեր	20
Գույք և գրասենյակային սարքավորումներ	3-8
Կապի և հաղորդակցման միջոցներ	1-5
Փոխադրամիջոցներ	5
Այլ հիմնական միջոցներ	3-8
Հաճախորդների միջոցներ	

Հաճախորդի միջոցները հաշվառվում են հետհաշվեկշռային հաշիվներով և չեն արտացոլվում ընկերության հաշվեկշռում:

Կապիտալ և էմիսիոն եկամուտ

Հնկերության բաժնեմասերի անվանական արժեքների հանրագումարը դասակարգվում է որպես կանոնադրական կապիտալ: Եթե նոր բաժնեմասերի վաճառքի արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնեմասերի անվանական արժեքը, ապա տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար կամ էմիսիոն եկամուտ (հակառակ դեպքում՝ որպես զեղչ):

Փոխանակման փոխարժեքի որոշման մեթոդաբանությունը

Փոխանակման փոխարժեքը որոշվում է՝ Հնկերության տնօրենի կողմից՝ ֆինանսական շուկայում տիրող իրավիճակից ելնելով:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցումը

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և գուտ գումարը բացահայտվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու ճանաչված գումարները և կա մտադրություն վերջնահաշվարկն իրականացնել գուտ հիմքով, կամ իրացնել ակտիվն ու մարել պարտավորությունը միաժամանակ:

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումները

Ֆինանսական ակտիվների վերադասակարգումը կատարվում է այն դեպքում, երբ տեղի է ունեցել սկզբնական գնահատականներում փոփոխություն և վերադասակարգման արդյունքում ֆինանսական հաշվետվությունները կլինեն առավել արժանահավատ:

Վարձակալություն

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կարող է վարձակալել հող, շենք և տարածքներ, այլ հիմնական միջոցներ, ինչպես նաև դրանց գծով կատարել կապիտալ ներդրումներ: Ընկերության գրասենյակը գործում է վարձակալած տարածքներում: Ընկերությունը, համաձայն ՖՀՄՍ 16-ի պահանջների, վարձակալած տարածքների համար ճանաչել է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ կիրառելով օգտագործվող լրացուցիչ փոխառության տոկոսադրույք:(տես Ծանոթագրություններ 20):

Ոչ նյութական ակտիվները սկզբնապես չափվում են սկզբնական արժեքով:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պարբերաբար բաշխվում է օգտակար ծառայության ընթացքում: Ամորտիզացիայի հաշվարկի համար կիրառվում է գծային մեթոդը և յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար հաշվարկված ամորտիզացիայի գումարը ճանաչվում է ծախս: Ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմում է սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությունը:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնական ուղղակի ծախսումները, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված վարձակալության ցանկացած խրախուսումներ: Բացառությամբ եթե Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ սեփականության իրավունքով ձեռք կբերի վարձակալված ակտիվը, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով օգտակար ծառայության ժամկետի և վարձակալության ժամկետի նվազագույնի ընթացքում: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումները (ներառյալ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումը, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից միացողային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գին, երբ Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրառործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Ընկերության վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը:

Վարձավճարների ներկա արժեքը հաշվելիս Ընկերությունն օգտագործում է սկզբնական կիրառման ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, եթե վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է կատարված վարձավճարները արտացոլելու համար: Լվելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, ըստ էության հաստատուն վարձավճարների փոփոխություն կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ներկայացվում են հիմնական միջոցների հետ միասին:

Ընկերությունը կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը կարճաժամկետ վարձակալությունների համար (այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվի դրությամբ 12 ամիս է կամ դրանից պակաս, և չեն պարունակում զեման օպցիոն):

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանկացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյոք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Փոխառություններ

Փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակահատվածում, որի ընթացքում կատարվում (հաշվեզրկում) են, բացառությամբ որակավորվող ակտիվներին վերաբերողները, որոնք կապիտալացվում են ՀՀՄՍ23-ին համապատասխան: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտաձուլում և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Նոր և վերանայված ստանդարտներ, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակահատվածների համար

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ) - արժույթը համարվում է փոխարկելի, երբ կազմակերպությունն ի վիճակի է փոխարկել տվյալ արժույթը այլ արժույթի հետ շուկաներում կամ այլ փոխարկման մեխանիզմով, որն առաջացնում է իրավաբանորեն ամրագրված իրավունքներ և պարտականություններ՝ առանց անհարկի ուշացումների, և կարող է փոխարկել նշանակալի չափով գումարներ:

Այս փոփոխությունը էական ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվություններին վրա:

Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել:

Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ՝ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Բացահայտումներ (ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ) - պահանջվում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին: Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում կարող են ներառվել բնական երևույթներից կախված և դրանց շնորհիվ արտադրված էլեկտրաէներգիայի (օրինակ՝ հողմային էլեկտրակայանների կողմից արտադրված) ձեռքբերման կամ վաճառքի ածանցյալ պայմանագրերը, եթե ձեռքբերողը պարտավոր է հետ վաճառել էլեկտրաէներգիայի այն ծավալը, որը չի կարող օգտագործել:
- Առևտրային դեբիտորական պարտքերի չափումը (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - պարզաբանվում է որ առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչման պահին պետք է չափվեն այն արժեքով, որը որոշվել է կիրառելով ՖՀՄՍ 15 «Հասույթ» գնորդների հետ պայմանագրերից՝ հաշվապահական ստանդարտը:
- Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման միջև տարբերությունը շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ:
- Էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման դեպքում պարտավորությունը կարող է ապաճանաչվել վճարումը կատարելու պահին, եթե կազմակերպությունը չի կարող չնդարկել, կանգնեցնել կամ հետ կանչել վճարումը, օգտագործել այդ միջոցները և վճարման համակարգի հետ կապված ռիսկը աննշան է:
- Պայմանական հատկանիշով ֆինանսական ակտիվների - հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ֆինանսական ակտիվի գծով բավարարված է հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ համարվելու պայմանը, եթե ակտիվի հոսքերը պայմանական են (օրինակ՝ կախված են արտանետված ջերմոցային գազերի ծավալից), պայմանագրային հոսքերը վերանայումից առաջ և հետո համապատասխանում են բազային վարկային համաձայնագրի բնութագրերին, ինչպես նաև հոսքերի վերանայումը կապակցված է բազային վարկային ռիսկին կամ վերանայված հոսքերը նշանակալիորեն չեն տարբերվում շուկայում համանման ֆինանսական ակտիվի հոսքերից:
- Վերահաշվարկումը գերադաճային տնտեսության արժույթով (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ) - եթե ներկայացման արժույթը գերադաճային տնտեսության արժույթ է, իսկ ֆունկցիոնալ արժույթը ոչ, ապա ֆինանսական հաշվետվությունները (արտերկրյա ստորաբաժանման արդյունքները և ֆինանսական վիճակը)՝ ներառյալ համադրելի ցուցանիշները, պետք է վերահաշվարկվեն ներկայացվող ամենավերջին հաշվետու ժամանակաշրջանի փակման փոխարժեքով:
- Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ),

- ՖՀՄՄ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» - ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (նախկին շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը) պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների:
- ՖՀՄՄ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. Բացահայտումներ» - հեղափոխություն է տրվում հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպություններին, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՄ-ների համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՄ-ներում:

5. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		
Տոկոսային եկամուտներ արժեթղթերից	508,615	515,465
	508,615	515,465
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		
Տոկոսային ծախսեր ներգրավված փոխառությունների և ստացված վարկերի դիմաց	(1,449)	(4,551)
Տոկոսային ծախսեր ռեալ համաձայնագրերից	(358,287)	(435,470)
Տոկոսային ծախսեր սվոպի գծով	(2,481)	(2,629)
	(362,217)	(442,650)
Զուտ տոկոսային եկամուտ	146,398	72,815

6. Զուտ առևտրային եկամուտ

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ	71,287	29,465
Միևչև մարման ժամկետը պահվող ներդրումների առք ու վաճառքից զուտ եկամուտ	143	-
Արտարժույթի առք ու վաճառքից առաջացած կորուստներ	53	66
Արտարժույթի վերագնահատումից առաջացած օգուտներ	329,447	96,691
Ընդամենը	400,930	126,222

7. Ընդհանուր վարչական ծախսեր

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(52,958)	(40,823)
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	(9,048)	(9,048)

Ներդրումային ընկերության շենքի և սարքավորումների, փոխադրամիջոցների տեխնիկական սպասարկման և սպահանման գծով ծախսեր	(1,511)	(1,458)
Առողիտի և այլ խորհրդատվական ծախսությունների գծով ծախսեր	(1,920)	(1,360)
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	(1,216)	(1,333)
Գրասենյակային և կազմակերպչական ծախսեր	(1,394)	(1,436)
Տրանսպորտային ծախսեր	(1,198)	(935)
Այլ	(1,655)	(1,508)
Ընդամենը	(70,900)	(57,901)

8. Այլ ծախսեր

	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասարակական կապերի գծով ծախսեր	(1,514)	(1,288)
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	(1,814)	(1,521)
Այլ ծախսեր	(44,309)	(11,419)
Ընդամենը	(47,637)	(14,228)

9. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ դրամական միջոցներ	957	957
Դրամական միջոցներ բանկերում	39,819	22,124
Դեպոնացված հաշիվներ բանկերում	75,670	45,869
	116,446	68,950

10. Պահանջներ բանկերի նկատմամբ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային ոսկի	620,576	389,225
Թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ	265,885	166,763
	886,461	555,988

11. Տրված փոխառություններ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրված փոխառություններ	43,458	44,552
	43,458	44,552

31 Դեկտեմբեր 2025թ-ի դրությամբ տրված փոխառությունները իրենցից ներկայացնում են Հնկերության մասնակցին տրամադրված կարճաժամկետ և անտուկոս փոխառությունները:

12. Ամորտիզացված արժեքով հաշվառվող ներդրումներ

	(հազար դրամ)	
	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ պետական պարտատոմսեր	4,438,698	4,851,286
	4,438,698	4,851,286

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ միջին ժամկետ պետական պարտատոմսեր	10.86%	29.04.2028թ.	10.86%	29.04.2028թ.
ՀՀ միջին ժամկետ պետական պարտատոմսեր	11.81%	29.04.2027թ.	11.81%	29.04.2027թ.
ՀՀ երկարաժամկետ պետական պարտատոմսեր	11.74%	29.04.2031թ.	11.74%	29.04.31թ.
ՀՀ երկարաժամկետ պետական պարտատոմսեր	9.97%	29.04.2035թ.		

13. Հիմնական միջոցներ

(հազար դրամ)

Մկզբնական արժեք

	Համակ. և կապի միջոցներ	Փոխադրամիջ ոցներ	Այլ հիմն. միջոցներ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	23,410	4,990	3,092	31,492
Ավելացում	130	8,527	-	8,657
Օտարում	(374)	-	-	(374)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,166	13,517	3,092	39,775
Ավելացում	228	-	-	228
Դուրս գրում	(798)	-	-	(798)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,596	13,517	3,092	39,205
Գույքակազմ մաշվածություն				
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	(23,243)	(4,990)	(812)	(29,045)
Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(100)	(1,421)	-	(1,521)
Օտարման հետևանքով դուրսգրում	374	-	-	374
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(22,969)	(6,411)	(812)	(30,192)

Հաշվետու տարվա մաշվածության ծախս	(108)	(1,705)	-	(1,813)
Դուրս գրում	798	-	-	798
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(22,279)	(8,116)	(812)	(31,207)
Զուտ հաշվեկշռային արժեքն առ 31.12.2024թ.	197	7,106	2,280	9,583
Զուտ հաշվեկշռային արժեքն առ 31.12.2025թ.	317	5,401	2,280	7,998

Այլ հիմնական միջոցների մեջ ներառված է նկար, որն իրենից ներկայացնում է մշակութային արժեք ունեցող հիմնական միջոց և ենթակա չէ մաշվածության:

14. Պարտավորություններ Բանկերի նկատմամբ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ներգրավված փոխառություններ	-	35,962
Ռեպո համաձայնագրեր	4,540,494	4,948,733
	4,540,494	4,984,695

15. Ստացված փոխառություններ

	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(հազար դրամ) 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մասնակցից ստացված փոխառություններ	27,469	15,862
Այլ ստացված փոխառություններ	35,467	36,880
	62,936	52,742

Մասնակցից ստացված փոխառությունները իրենցից ներկայացնում են անորոշ ժամկետով անտոկոս փոխառություններ:

16. Կանոնադրական կապիտալ

Համաձայն Հնկերության կանոնադրության, կանոնադրական կապիտալը կազմված է թվով 412,000,000 (չորս հարյուր տասներկու միլիոն) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 1 (մեկ) ՀՀ դրամ անվանական արժեքներով: Հնկերության մասնակիցներն են.

	Բաժնեմասի անվանական արժեք	Բաժնեվիչ %
Վահագն Առաքելյան	288,400,000	70%
Գոռ Առաքելյան	123,600,000	30%

17. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝

Ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվություններին առումով Հնկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

(հազար ՀՀ դրամ)

	2025		2024	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
<i>Պահանջներ հաճախորդների նկատմամբ</i>				
Հունվարի 1-ի դրությամբ	44,552	-	34,497	-
Տարվա ընթացքում տրամադրված	-	-	26,256	-
Տարվա ընթացքում մարված	(1,094)	-	(16,201)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	43,458	-	44,552	-
<i>Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ</i>				
Հունվարի 1-ի դրությամբ	15,862	-	15,922	-
Տարվա ընթացքում ստացված	40,939	-	17,427	-
Տարվա ընթացքում մարված	(29,332)	-	(17,487)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,469	-	15,862	-

«Հիմնական աշխատողներին տրվող աշխատավարձ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի ընդհանուր վարձատրությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 52,957 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 31,555 հազար դրամ):

18. Ռիսկի կառավարում

18.1 Պարտքային ռիսկ

Վարկային (պարտքային) ռիսկը գործընկերոջ կողմից իր ստանձնած պարտավորությունները (այդ թվում թողարկված արժեթղթերի գծով) ժամանակին և լրիվությամբ չկատարելու ռիսկն է, որը գնահատվում է պարտքի և տոկոսային վճարումների ընդհանուր գումարով:

Վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում են Հնկերության ակտիվները, հետհաշվեկշռային պարմանական պարտավորությունները և հետհաշվեկշռային անավարտ ժամկետային գործառնությունները:

18.2 Զուկայական ռիսկ

Զուկայական ռիսկը Հնկերության կողմից շուկայական գների փոփոխության հետևանքով կարուստներ կրելու վտանգն է, որը կապված է տոկոսադրույքների նկատմամբ զգայուն ակտիվների ու պասիվների և կապիտալի գործիքների հետ:

Զուկայական ռիսկը իր մեջ ներառում է արտարժույթային, տոկոսադրույքների փոփոխման և գնային ռիսկերը:

Արտարժույթային ռիսկի կառավարումն իրականացվում է արտարժույթների փոխարժեքների փոփոխություններով պայմանավորված օգուտներ ստանալու (կորուստներ չկրելու) տեսանկյունից:

Արտարժույթային ռիսկի կառավարման գործընթացը ներառում է՝ արտարժույթային շուկայի ուսումնասիրման, արտարժույթային ռիսկի կանխատեսման, գնահատման՝ ռիսկի հնարավոր չափերի և հետևանքների որոշման, արտարժույթային ռիսկի հետ կապված կորուստների կանխարգելման և նվազեցման փուլերը: Արժույթային շուկայի վերլուծության գնահատականները Հնկերությունում արվում են հիմք

ընդունելով տարբեր տեղեկատվական համակարգերով ստացված տեղեկատվությունը, միջազգային ինտերնետային կայքերի վերլուծական տեղեկատվությունները՝ կիրառելով վերլուծության երկու մեթոդ՝ ֆունդամենտալ և տեխնիկական: Ֆունդամենտալ վերլուծությունը ենթադրում է շուկայի վերլուծություն՝ տնտեսությունը բնութագրող տարբեր ցուցանիշների դինամիկայի, ինչպես նաև քաղաքական իրադարձությունների, օրենսդրական դաշտի փոփոխությունների հիման վրա: Կանխատեսումների իրականացման համար հիմք են հանդիսանում երկարաժամկետ հատվածում փոխարժեքի վրա ազդող երկրի տնտեսական պայմանները: Տեխնիկական վերլուծությունը ենթադրում է գների նախկին դինամիկայի հիման վրա գների ապագա փոփոխությունների կանխատեսումը: Ուսումնասիրվում են փոխարժեքների տատանման միտումները կամ տրենդները, վերլուծության են ենթարկվում փոխարժեքների տատանումների դրսևորումները:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի փոփոխությունն ուղղակիորեն ազդում է ներդրումային ընկերության տոկոսային ռիսկի, ակտիվների ու պարտավորությունների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա: Այդ պատճառով, ակտիվների և պարտավորությունների տոկոսադրույքների վերանայման ժամկետայնության վերլուծությունը թույլ է տալիս ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին վերլուծել ներդրումային ընկերության տոկոսադրույքի ռիսկը և, հետևաբար, ակնկալվող օգուտները կամ վնասները:

Տոկոսային ռիսկը փոխառու կապիտալի շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որը իր մեջ ներառում է տոկոսադրույքների փոփոխության, եկամտաբերության կորի տեսքի փոփոխության, տոկոսադրույքների տատանողականության փոփոխության, տարբեր տոկոսադրույքների միջև հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Տոկոսադրույքի ռիսկը հաշվարկվում է որպես տոկոսադրույքի հատուկ ռիսկի և ընդհանուր ռիսկի հանրագումար, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S\Omega = S\Omega_{\text{հատուկ}} + S\Omega_{\text{ընդհանուր}},$$

որտեղ՝

- ✓ $S\Omega$ - տոկոսադրույքի ռիսկն է,
- ✓ $S\Omega_{\text{հատուկ}}$ - տոկոսադրույքի հատուկ ռիսկն է,
- ✓ $S\Omega_{\text{ընդհանուր}}$ - տոկոսադրույքի ընդհանուր ռիսկն է:

Տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերը հաշվարկվում են առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի նկատմամբ: Հեղ որում, պարտքային արժեթղթերը դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

Պարտքային արժեթղթերի դիրքը Հնկերության պարտքային արժեթղթերի (ներառյալ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) և որպես պարտավորություն հանդիսացող պարտքային արժեթղթերի (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած պարտքային արժեթղթերի) մեծությունների տարբերությունն է: Պարտքային արժեթղթերի դիրքերը սահմանվում են.

- ա. երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,
- բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,
- գ. փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Պարտքային արժեթղթերի համախառն դիրքը հաշվարկվում է որպես պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:

Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկման նպատակով պարտքային արժեթղթերի յուրաքանչյուր խմբի նկատմամբ իրականացվում է պարտքային արժեթղթերի դիրքերի հաշվարկ:

Դիրքերի հաշվարկից հետո հաշվարկվում է պարտքային արժեթղթերի համախառն դիրքը, որն էլ տոկոսադրույքի հատուկ ռիսկի մեծությունն է:

Համախառն դիրքի հաշվարկում պարտքային արժեթղթերը տարբերակված կշիռներով ընդգրկելու նպատակով դասակարգվում են հետևյալ դասերի:

Պարտքային արժեթղթերի դասերն են.

• պետական պարտքային արժեթղթեր՝ պետությունների/կառավարությունների, կենտրոնական բանկերի և տեղական կառավարման մարմինների պարտքային արժեթղթեր,

• հուսալի պարտքային արժեթղթեր: Հուսալի պարտքային արժեթղթերի թվին են դասվում միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից թողարկված պարտքային արժեթղթերը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի պարտքային արժեթղթերը, օտարերկրյա բանկի կողմից թողարկված /ԲԲԲ-/Բաա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, օտարերկրյա ոչ բանկ կազմակերպության կողմից թողարկված /Ա-/Ա3/ և ավելի բարձր վարկանիշ ունեցող պարտքային արժեթղթերը, ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից՝ Բ- և ավելի բարձր վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպությունների պարտքային արժեթղթերը,

• այլ պարտքային արժեթղթեր, որոնք չեն դասվում պետական պարտքային և հուսալի պարտքային արժեթղթերի շարքին:

Գնային ռիսկ

Շուկայական գների փոփոխությունը մեծապես ազդում է ֆինանսական գործիքների արժեքի վրա, ընդ որում, այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել ինչպես առանձին արժեթղթերին կամ նրանց թողարկողներին հաստիք գործոններով, այնպես էլ շուկայում շրջանառվող բոլոր արժեթղթերի վրա ազդող ընդհանուր գործոններով:

Գնային ռիսկը ֆոնդային շուկայում անբարենպաստ փոփոխությունների ռիսկն է, որն իր մեջ ներառում է արժեթղթերի գների փոփոխության, արժեթղթերի գների տատանողականության, տարբեր արժեթղթերի և ինդեքսների միջև գնային հարաբերակցության փոփոխության ռիսկերը:

Գնային ռիսկը հաշվարկվում է առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների (բաժնային արժեթղթերի) նկատմամբ:

Կապիտալի գործիքների դիրքը, որպես ակտիվ հանդիսացող կապիտալի գործիքների (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած կապիտալի գործիքների) և որպես պարտավորություն հանդիսացող կապիտալի գործիքների (ներառյալ՝ հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների հիմքում ընկած կապիտալի գործիքների) մեծությունների տարբերությունն է: Կապիտալի գործիքների դիրքերը սահմանվում են՝

- ա. երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,
- բ. կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,
- գ. փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի:

Կապիտալի գործիքների համախառն դիրքը հաշվարկվում է որպես կապիտալի գործիքների տարբեր դիրքերի (երկար և կարճ) բացարձակ մեծությունների հանրագումար:

Կապիտալի գործիքների համախառն զուտ դիրքը հաշվարկվում է որպես կապիտալի գործիքների երկար դիրքերի հանրագումարի և կարճ դիրքերի հանրագումարի (բացարձակ մեծությամբ) միջև տարբերություն:

Կապիտալի գործիքները դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով:

18.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հեկերությունն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հեկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Իրացվելիության ռիսկի կառավարումը ընթացիկ ժամանակահատվածում կապված է ակտիվների և պասիվների կառավարման արդյունավետ խնդրի լուծման հետ՝ ստանալ առավելագույն շահույթ, պահպանելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակը:

Իրացվելիության ռիսկի կառավարումը ակնկալում է .

✓ կանխիկ հոսքերի վերլուծություն

- ✓ ակտիվների և պարտավորությունների դասակարգում ըստ պայմանագրային ժամկետների
✓ շուկայի մոնիտորինգ:

Հնկերությունում իրացվելիության կառավարման հիմնական մեթոդ է հանդիսանում ակտիվների կառավարման մեթոդը:

Իրացվելիության առաջնային աղբյուրները Հնկերության դրամարկդն է և հաշվարկային հաշիվներում առկա միջոցները: Իրացվելիության երկրորդային աղբյուրները բարձր իրացվելի եկամտաբեր ակտիվներն են, որոնք կարճ ժամկետում և նվազագույն կորուստների ռիսկով կարելի է փոփոխել կանխիկ դրամական միջոցների:

Դրանք ձևավորվում են ՀՀ պետական գանձապետական արժեթղթերից:

Իրացվելիության կառավարման համար կիրառում են նաև իրացվելի ակտիվները վաճառելու մեթոդը, երբ իրացվելիության ցածր մակարդակի դեպքում Հնկերությունը դրամական միջոցներ ստանալու նպատակով վաճառում է ակտիվներ և պարտավորությունների կառավարման մեթոդն է, որը ենթադրում է ֆինանսական շուկայում արտաքին փոխառությունների, վարկերի, ռեպո-համաձայնագրերի միջոցով փոխառու միջոցների ներգրավում ու ակտիվների և պարտավորությունների միջև անհրաժեշտ հարաբերակցության հաստատում: Իրացվելիության ռիսկը կառավարելու և վերահսկելու նպատակով Հնկերությունը պարբերաբար կատարում է ընթացիկ և ժամկետային իրացվելիության մոնիտորինգ՝ արտաքին միջավայրի փոփոխության դեպքում իրացվելիության լավագույն իրավիճակին հասնելու համար:

2025թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)	-	5.9%	-
Մինչև 1 տարի	-	4,540,714	4,540,714
1-5 տարի	-	-	-
5 տարուց ավել	62,936	-	62,936
	62,936	4,540,714	4,603,650

2024թ.

	Անտոկոս	Գործիքներ հաստատուն տոկոսադրույքով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք (%)	-	7.5%	-
Մինչև 1 տարի	4,700	4,984,695	4,989,395
1-5 տարի	-	-	-
5 տարուց ավել	52,742	-	52,742
	57,442	4,984,695	5,042,137

19. Կապիտալի համարժեքություն

Հնկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով Հնկերության շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Հնկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է ի թիվս այլ միջոցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սահմանաչափերով: Հնկերությունն ապահովել է համապատասխանություն կապիտալի պահանջների հետ կապված բոլոր արտաքին պայմաններին: Հնկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: